

Բ. Հետաքրքրական էր նաեւ տեւողութիւնը: Ս. Սահակայ կանոնաց սա բացատրութիւնը՝ թէ «զկես գիշերին թերեւս արբեցութեան պարապիցէք» (123), շատ պերճախօս է եւ անկարօտ մեկնութեան: Վասակայ խրատունքը կը տեւեն նոյնպէս «մաշելով զերկայնութիւն զիշերացն» (Եղիշ. 52), ուր «մաշելը» ցոյց կու տայ մեծ մասին սպառումը սեղանին շուրջ, ինչպէս կը լինէր Հոովմայեցւոց մէջ ալ (Գար. Ա, 1277): Ուրեմն շատ բնական էր՝ որ կոչնականք հարկադրէին ելնել երբեմն տաճարէն՝ «ի ճեմիշն երթալոյ պատճառաւ» (Փաւս. 237): Բայց մեր նկարագրին համար դեռ կանուխ է այս պարագայն:

Ծ. — Հրաշք: — Ամէն ազնուական «առ զուրս» իւր տան պատրաստ ունէր միշտ «նռիրակ» կոչուած պաշտօնեայ մը, սովորաբար զինուոր, որոյ զործն էր վազել ուր որ տէրն հրամայէր (Եղիշ. 174. Փրպ. 518, '20): Ասոր պաշտօնն էր նաեւ հացկերութի առթիւ երթալ «կոչել» զանոնք՝ զորս կոչնատէրը պատուել կ'ուզէր, ինչպէս կը պատմէ Եղիշէ տիկնանց մասին (174): Գայլ վահան եւս ճաշի կոչելու համար զՄիհրան պարսիկ մարզպանը, հրամայեց «ծառայից իւրոց» որ